<<Bigger Than Us/Մեզնից Առավել>> նախագծի շրջանակներում արված ուսումնասիրություններ

ՀՀ կրթական հիմնախնդիրները

Հեղինակ՝
Արի Ագոփ

Դասավանդողների պակաս՝

Վերջին մեկ տարում ունեցել ենք ուսուցիչների թվի աննախադեպ նվազում: Իհարկե, տարիներ առաջ օպտիմալացում ենք ունեցել ուսուցիչների, մեկ տարում ուսուցիչների թվի 1000, 3000, մինչեւ 4000 նվազում է եղել, բայց դա եղել է պլանավորված կրճատում, իսկ հիմա պետությունը չի իրականացրել ուսուցիչների կրճատում, բայց մեկ ուսումնական տարում 877-ով ուսուցիչների թիվը պակասել է: Նախորդ ուսումնական տարում ունեինք շուրջ 31300 ուսուցիչ, այս տարի՝ 30200»: Կրթության փորձագետը նշում է, որ այս գործընթացը տեղի է ունենում 2 պատճառով. առաջինը, որ մանկավարժական բուհեր ընդունվողների թիվը կտրուկ նվազում է, եւ երկրորդ՝ շատերը, մասնավորապես երիտասարդները, չեն ուզում մնալ դպրոցում: «Երբ նայում ենք այս տարվա ընդունելության տվյալները, դիմորդների շարժը, տեսնում ենք, որ Ծիրակի եւ Վանաձորի համալսարաններում մաթեմատիկա առարկայի գծով դիմորդներ չկան; Փաստորեն, ֆիզիկան եւ քիմիան վաղուց փակվել էին, իսկ այս տարի էլ զրոյական է դարձել մաթեմատիկա մասնագիտությունը: Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում անցյալ տարի մաթեմատիկայի գծով ունեցել ենք 37 դիմորդ, իսկ այս տարի ընդամենը՝ 11: Երկու խոշոր մարզային բուհերում դիմորդների թիվը զրո է, մայրաքաղաքում ՝ 11: Մոտավոր հաշվարկով Հայաստանին տարեկան պետք է 100-120 մաթեմատիկայի ուսուցիչ, բայց մենք ունենք ընդամենը 11 դիմորդ, բնական է, որ այդ 11-ի մի մասը չի ընդունվի, մյուս մասն էլ չի ուզենա ուսուցիչ աշխատել; Երբ մարդիկ դիմում են մանկավարժական համալսարան, դա դեռեւս երաշխիք չէ, որ գնալու են դպրոց: Հետևաբար՝ մենք որտեղի՞ց ենք գտնելու տարեկան 100 ուսուցիչ, որ դպրոցում մաթեմատիկա դասավանդի»,-ասում է նա: Կրթության փորձագետի ձեւակերպմամբ, եթե այս խնդիրը լուծելու ուղղությամբ ոչինչ չարվի, հաջորդ տարի ուսուցիչները թիվը կարող է էլ ավելի պակասել:
Ըստ նրա՝ վիճակը բարդ է նաեւ մյուս մասնագիտությունների գծով. «Օրինակ՝ աշխարհագրության գծով մանկավարժական համալսարանում ընդամենը 5 դիմորդ կա, մի փոքր ավելի դիմել են ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետ: Արդեն նշեցի, որ քիմիան ու ֆիզիկան վաղուց հայտնվել են անհույս առարկաների թվում, գերմաներենի գծով ընդամենը 3 դիմորդ ունենք, ֆրանսերենից մանկավարժական համալսարանում ընդունելություն չկա, կենսաբանությունից ընդամենը 15 դիմորդ է: Մանկավարժական համալսարանի դիմորդների 17 %-ը ցանկանում է դառնալ հոգեբան: Մի քանի առարկաների գծով միասին վերցրած՝ ավելի քիչ դիմորդ ունենք, քան հոգեբանների դեպքում է: Այս տվյալները մտահոգիչ են: Մինչեւ ընդունված դիմորդները ավարտեն չորս տարի անց, արդեն իսկ ուսուցիչների խնդիր ենք ունենալու»: Սերոբ Խաչատրյանը ներկայացրեց նաեւ դպրոցներում աշխատող ուսուցիչների պատկերը. «Հայաստանի ուսուցիչների 12%-ը 65 տարեկանից բարձր տարիք ունի: Եթե 5 տարի առաջ ունեինք մոտ 1700 ուսուցիչ, որոնք 65-ից բարձր տարիքի էին, հիմա այդ ուսուցիչների թիվը 3500-ն անցել է: Շատ դպրոցներում ուսուցիչները խնդրում են իրենց թոշակի ուղարկել, բայց տնօրենը չի կարողանում, որովհետեւ

փոխարինող չկա…Մոտ 3 անգամ նվազել է մինչեւ 25 տարեկան ուսուցիչների թիվը: Այսօր տարեկան ընդամենը մի քանի հարյուր ուսուցիչ է դպրոց մտնում, ինչը լուրջ խնդիր է, եւ չի կարելի ականջի հետեւ գցել: Հայաստանում նախկինում ունեցել ենք մոտ 900 քիմիայի ուսուցիչ, մեկ տարում այդ թիվը 70-ով պակասել է: Եթե այս միտումը մի 10 տարի շարունակվի, մենք քիմիայի ուսուցիչ անգամ Երեւանում չենք ունենա, պատկերացրեք, թե ինչ աղետ կլինի: Ու այն բոլոր բարեփոխումները, որոնցով հպարտանում ենք, թե դպրոցներ ենք վերանորոգում, կամավոր ատեստավորում ենք անում, անիմաստ են դառնում, որովհետեւ ո՞ւմ համար ենք անում, եթե ուսուցիչներ չեն լինելու: Մենք պետք է ավելի շատ մարդուժին ուշադրություն դարձնենք, քան շենքերին:

Գնահատման համակարգի անկատարություն՝

Մեր դպրոցների հիմնական խնդիրներից մեկն այն է, որ աշակերտներին կենտրոնացնում ենք ոչ թե ստացած գիտելիքի, այլ գնահատականի վրա: Արդյունքում երեխան ստանում է ոչ արդյունավետ կրթություն. գիտելիք, որ շատ հեշտ կարող է մոռացվել:

Օրինակ բերեմ անգիրները: Մենք անցնում ենք մեր հայ հայտնիների ստեղծագործությունները, բանաստեղծությունները, որպեսզի երեխաներին ծանոթացնենք մեր մեծերի, մեր մշակույթի հետ: Շատ տարածված դեպք է դպրոցներում, երբ ուսուցիչը հարվածային երեխային ասում է.

—Գոնե մի երկու տող սովորիր, արի ասա, գնահատականդ նշանակեմ:

Մի՞թե մենք իրոք նպատակ ունենք երեխային ծանոթացնելու գրողի ասելիքի հետ, թե՞ ուզում ենք լրացնել մատյանում դատարկ մնացած գնահատականի վանդակը: Մենք պետք է ի վերջո ստեղծագործությունը հիշենք ոչ թե իր տողերով, այլ իմաստով, ասելիքով: Պետք է երեծային կենտրոնացնենք վերլուծական կողմի վրա, ոչ թե գնահատականի: Ոչ թե անգիրներ, այլ վերլուծություն:

Նշումներ՝

Մեկ այլ հարց, որը վերաբերվում է մեր բարբառներին և արևմտահայերենին: Եթե մենք ուզում ենք երեխաներին ծանոթացնել մեր արևմտահայ գրողներին, ապա շատ սխալ է միանգամից իրենց առջև դնել Մեծարենցի կամ Զոհրապի ստեղծագործությունները և կարդալ, վերլուծել տալ: Աշակերտն ընդհանրապես կհրաժարվի այդ լեզուն ուսումնասիրելուց: Պետք է ամեն ինչ անել աստիճանաբար.

Քայլ 1-ին: Ծանոթացում լեզվի/բարբառի առանձնահատկություններին, հետաքրքիր կողմերին:

Քայլ 2-րդ: Համեմատել դրանք մեր լեզվի հետ, ներկայացնել տարբերությունները:

Քայլ 3-րդ: Արդեն ծանոթացնել գրողներին, ստեղծագործություններին:

Բուհ-երի գրականության ցանկ՝

Բուհ-երում դասախոսների կողմից կազմվող և հանձնարարվող գրականության ցանկի գերակշռող մասը ռուսերենով է: Կարծում եմ՝ մեր Բուհ-երի գերնպատակներից մեկն է մեր երկրում ապահովել կրթություն միջազգային մակարդակով: Սակայն դեռևս բացակայում է բավարար չափով հայերեն և անգլերեն գրականությունը: Ունենք բազում լավ թարգմանիչներ, ովքեր կարող են ստանձնել և լավագույնս իրականացնել այդ գործընթացը:

Աղբյուրներ՝

https://168.am/2018/11/23/1045315.html

https://hy.armradio.am/2022/06/07/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%AB%D5%B9%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A9%D5%AB%D5%BE%D5%A8-870-%D5%B8%D5%BE-%D5%BA/

https://ampop.am/number-of-state-schools-in-armenia/

https://www.aravot.am/2022/06/13/1273872/

ՀՀ Պոչամբարների հարցը

Հեղինակներ՝
Լաուրա Թորոսյան
Յուրի Հյուսյան

Պոչամբարն այն կառույցն է, որտեղ առանձնացվում են քիմիական վերամշակման հետևանքով առաջացած թունավոր, վտանգավոր թափոններ: Գործող պոչամբարներն առաջին հայացքից նման են լճերի, բայց ի տարբերություն դրանց, պոչամբարները «հարուստ» են թունավոր նյութերով: Պոչամբարները փակվում են՝ պատվելով հողային շերտով: Այդպես փորձ է արվում կանխել պոչամբարներում կուտակված վտանգավոր նյութերի ներթափանցումը բնություն: Սակայն Հայաստանի ներկայիս իրավիճակը շատ բարդ է: Հայաստանում կա ավելի քան 23 պոչամբար որոնցից 8-ը փակված են, իսկ մնացած 15-ը գործող, որոնք նախատեսվածից ավելի մեծ են՝ ռեսուրսների անխնա օգտագործման հետևանքով: Հանքերը հիմնականում տեղակայված են Սյունիքում, իսկ պոչամբարների մեծամասնությունը կառուցվում են հանքերին հնարավորինս մոտ: Հանքերի անխնա շահագործման հետևանքով պոչամբարները ահռելի տարածքներ են զբաղեցնում Սյունիքի գյուղերում՝ վտանգի ենթարկելով գյուղացիներին ինչպես նաև ՀՀ քաղաքացիներին, քանի որ նորափակ պոչամբարների վրա աճեցվում են մշակաբույսեր, որոնք հասնում են մեր առևտրի կետեր:

Հայաստանում հանքերը շահագործվում են ոչ միայն Հայաստանի այլև Գերմանիայի, Ռուսաստանի և Անգլիայի կողմից: Խախտելով բնապահպանական կանոնները, պոչամբարները փակելու և դրանց ահռելի ծավալի համար շահագործող երկրներից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում, Հայկական Բնապահպանության Նախարարությունը նույնպեսայս հարցին չի շտապում շուտափույթ լուծում տալ:

Թեղուտի պոչամբար՝

Քանի որ մեր նախագծի նպատակն է անցկացնել բարեփոխումներ մեր մեծ և փոքր համայնքներում, ուստի մեր ուսումնասիրության թիրախն այժմ Թեղուտ գյուղն է:

Թեղուտի պոչամբարը սկսել են շահագործել 2015թ-ի սկզբին <<Թեղուտ ՓԲԸ>> - կողմից: Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման արդյունքում առաջացած պոչանքները կուտակվում են հենց այստեղ: Այն առաջացել է Խառատանոց գետի կիրճում, որտեղ հատվեցին սաղարթախիտ անտառներ: Պոչամբարը՝ ըստ Թեղուտի հանքավայրի շահագործման նախագծի, պետք է ամբարի 173.65 միլիոն խմ պոչանք, մինչդեռ Զեկույցում նշված է, որ պոչամբարի տարողությունը 120 միլիոն խմ է:
«Թեղուտի պոչամբարի ներկայիս նախագիծը միջազգային չափանիշների համեմատությամբ անընդունելի է ֆիզիկական անկայունության առումով: … Այն համարժեք չէ թե՛ բնապահպանական, թե՛ ֆիզիկական կայունության առումով»,- նշված է «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում. Ուսումնասիրության համաձայն՝ Թեղուտի պոչամբարի պատնեշի պատի անկայունության պատճառներից է համարվում, որ սեյսմիկ գոտում պոչամբարը միջազգայնորեն ընդունված բարձրացման արագությունից ավելի արագ է բարձրացվում, ինչպես նաև սխալ է ընտրված վերընթաց բարձրացման թեքությունը:
Իր գործունեության կարճ ժամանակահատվածում Թեղուտի պոչամբարի արտահոսքերն արդեն իսկ մեծ վնաս են պատճառել Լոռու բնությանը, գյուղատնտեսությանը, ջրային ռեսուրսներին: Պոչամբարի արտահոսքերով աղտոտվում է Ծնող գետը, որով 2-րդ դասի մաքուր ջրի փոխարեն արդեն հոսում է 5-րդ դասի ամենավատ որակի ջուր: Թեղուտի պոչամբարը գտնվում է 8 բալանոց սեյսմիկ գոտում, ինչը երկրաշարժի դեպքում կարող է շատ մեծ վնաս հասցնել Ծնող գյուղի բնակիչներին:
Մյուս ռիսկը, պոչամբարի թթվային ջրերով շրջակա միջավայրի և ջրային ռեսուրսների աղտոտումն է: «Չնայած պոչամբարը երեսպատված է հատակում, թերևս դա բավարար չի լինի պոչամբարի պատերից ԱԹԴ-ի (ապարաթթվային դրենաժ) հնարավոր արտահոսքը կանխելու համար: Հետևաբար ջրի արտահոսքը տեղի կունենա հովտի վերին (առանց երեսպատման) պատերից: Այս ներթափանցող ջուրը միջինից երկարաժամկետ հատվածում կարող է դառնալ թթվային, իսկ դրա վերահսկողությունը դժվար է, քանի որ դա կարող է թափանցել բնական ստորերկրյա ջրերի համակարգ նախքան կանգնեցվելը և մաքրվելը հատուկ մշակված մեղմացնող միջոցառումներով»:

Աղբյուրներ՝
https://armeniasputnik.am/20211123/hhum-hanqeri-ekamuty-nvorvovi-kbazhanvi-harkajin-barepvokhumneri-nvor-patet-35653342.html
https://www.ecolur.org/hy/news/teghout/8566/
https://www.youtube.com/watch?v=YrrDzuZ9RG4

Ի՞նչ գործողություններ են իրականացվում Եվրոպայում շրջակա միջավայրը պաշտպանելու համար և ի՞նչ կարող է անել մեզանից յուրաքանչյուրը:

Հեղինակ՝
Նանե Ժամհարյան

Եվրոպայի խորհրդի կողմից մշակված մի շարք միջազգային իրավական ստանդարտներ, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, Եվրոպական սոցիալական կանոնադրությունը և ինչպես նաև վայրի բնության և բնական միջավայրի պահպանման մասին կոնվենցիան (Բեռնի կոնվենցիա), հաջողությամբ օգտագործվել են շրջակա միջավայրը պաշտպանելու համար:

Մինչ օրս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բնապահպանական գործերով կայացրել է շուրջ 300 վճիռ: Այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են կյանքի, խոսքի ազատության և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, կիրառվել են մի շարք խնդիրների, այդ թվում՝ աղտոտվածության, տեխնածին ու բնական աղետների և բնապահպանական տեղեկատվության հասանելիության նկատմամբ:

Ակտիվիստներն օգտագործել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան ազգային մակարդակում՝ խրախուսելու կառավարություններին լրացուցիչ քայլեր ձեռնարկել կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի դեգրադացիայի դեմ պայքարելու համար:
Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի և Կազմակերպության տարբեր կառույցների նախագահները կոչ են արել կատարելագործել գոյություն ունեցող իրավական գործիքները՝ օգնելու եվրոպական պետություններին՝ լուծելու բնապահպանական լուրջ խնդիրները, որոնց բախվում ենք բոլորս:

Այսօրվա երիտասարդության շրջանում բնապահպանական խնդիրների լուծման հսկայական ներուժ է նկատվում, որը միշտ արձագանքել է ժամանակակից հասարակության ամենասուր խնդիրներին, ինչը հանգեցրել է հայտնագործությունների, գյուտերի և տեխնոլոգիական առաջընթացի: Երիտասարդները զգալիորեն ունեն շարժունակության, ինտելեկտուալ ակտիվության և առողջության այնպիսի մակարդակ, որը նրանց բարենպաստորեն տարբերում է բնակչության մյուս խմբերից:

Ստորև բերված է ընդամենը 7 սովորություն, որոնք մեր շրջակա աշխարհը փոքր-ինչ ավելի մաքուր կդարձնեն.

1. Խնայե՛ք ռեսուրսները
2. Տեսակավորե՛ք աղբը
3. Տրամադրե՛ք վերամշակվող նյութեր
4. Գերադասե՛ք օգտվել ԷԿՈ տրանսպորտից
5. Շարունակաբար օգտագործեք և մի՛ վատնեք
6. Ուշադրություն դարձրե՛ք Ձեր սնունդին
7. Փորձե՛ք ձերբազատվել պլաստիկից

Այս սովորույթները զարգացնելով և դրանք մյուսներին փոխանցելով՝ մենք կարող ենք նպաստել շրջակա միջավայրի բարեփոխմանը:

Աղբյուրներ՝
https://ru.euronews.com/2015/04/22/five-environmental-priorities-for-europe-on-earthday?fbclid=IwAR1-zDx7ERMWGV51LNLItWknU6O2LJY_ckekqCCkEkXDsghMJhZITH8Ccz4
https://www.gq.ru/travels/travels/35-prostyh-pravil-zhizni-pomogut-sohranit-okruzhayuschuyu-sredu?fbclid=IwAR1-zDx7ERMWGV51LNLItWknU6O2LJY_ckekqCCkEkXDsghMJhZITH8Ccz4
https://www.kp.ru/guide/sokhranenie-okruzhajushchei-sredy.html?fbclid=IwAR1xOja_UUhK5FsqbU1Zj2ytEz15yz5-UNUAuW2XGFPTT1VYKk8Lhvtx3pY

Արեւմտահայերէն

Հեղինակ՝
Մարիա Տիշաքճեան

Արեւմտահայերէնը հայերէնի առանձին ճիւղ է: Թեւ շատ նմանութիւններ ունի արեւելահայերէնի հետ, այն ժամանակի ընթացքին ազդուեր է տարբեր լեզուներէ:
Արեւմտահայերէնի ամէնահիւրայատուկ կողմերէն մէկը արտասանութիւնն է: Ի տարբերութիւն արևելահայերէնի, որ ունի աւելի մեղմ և կլոր հնչողութիւն, արեւմտահայերէնն ունի աւելի սուր և աղիքային հնչողութիւն: Այս մէկը մասամբ մը պայմանաւորուած է իր տարբեր լեզուներու և բարբառներու փողազդեցութիւնէն, օրինակ արաբերէնը, թուրքերէնը և քրտերէնը, որոնք ազդած են հնչիւնաբանութեան և քերականութեան վրայ:
Արեւմտահայերէնի մէկ այլ իւրայատկութիւնն է իր բառապաշարը: Դարերու ընթացքին արևմտահայերէնի մէջ նեռարած են օտար բառեր ինչպէս՝ արաբերէն, թուրքերէն, ֆրանսերէն ու անգլերէն լեզուներէ: Այս պատճառած է հարուստ և բազմազան բառարան ունենալու, որը կարտացոլէ մշակոյթային և լեզուական ազդեցութիւնները, որոնք ժամանակի ընթացքին ձևաւորել են լեզուն:
Իր մշակոյթային նշանակութեամբ արեւմտահայերէնը հայկական ինքնութեան կենսական մասն է, յատկապէս սփիւռքի մէջ: Այն կծառայէ որպէս կապ հայ մշակոյթի պատմութեան և աւանդոյթներու հետ և կապահուէ հայկական ժառանգութիւնը պահպանումը և տարածումը այն երկրներու մէջ, որ հայերը փոքրամասնութիւն կը կազմեն:
Ամէն լեզու արժանի է պահպանման: Լեզուն պարզապէս հաղորդակցելու միջոց չէ, այն նաեւ համայնքի մշակոյթային ինքնութեան և ժառանգութեան կարեւոր մասն է: Երբ լեզու մը մահանայ, մենք կը կորցնենք կենսական կապը անցեալին ու ներկային:
«Արեւելահայերէնը աւելի դիւրին է եւ աւելի լաւ» նախադասութիւնը ես անձամբ հաճախ կը լսեմ: Կարեւոր է գիտնալ, որ և՛ արևմտահայերէնը, և՛ արևելահայերէնը ունին իրենց եզական հատկանիշներն ու ներդրումը հայոց լեզուի և մշակոյթի մէջ: Իւրաքանչիւր լեզու ունի իր արժէքն ու նշանակութիւնը, եւ հարց չէ, որ մէկը միւսէն «լաւ» է: Դիւրինի հարց չէ, ասի լեզու է:
Լեզուներու պահպանումը չեզոքացման հարց չէ: Մենք կրնանք աշխատիլ անհետացումի սահմանին գտնուող լեզուները պահպանելու վրայ՝ միաժամանակ խոսելով մնացածը: Պահպանելով ու առաջ տանելով լեզուներու և մշակոյթներու բազմազանութիւնը՝ մենք կը հարստացնենք մեր հաւաքական մարդկային փորձը և կապահովենք, որ ապագա սերունդներուն հասանելի ըլլայ հեռանկարներու, գաղափարներու լայն շրջանակ:
Հայաստանի Հանրապետութեան պետք է արեւմտահայերէն լեզուի պահպանման համար սկսի քայլեր ձեռնարկել: Այդ ընելու ճանապարհներէն մէկը արեւմտահայերէնի յաւելումն է դպրոցական ծրագրին: Ուսումնական ծրագրի մէջ կայ «Հայոց լեզու» նիւթը, բայց մենք հայոց լեզու չենք սորվիր, կը սորվինք արեւելահայերէն լեզու: Կը սորվինք արևելահայերէնի քերականութիւն, ուղղագրութիւն և կը գրենք արևելահայերէն պետական քննութիւն:
Ուսումնական ծրագրի մէջ ներառելով արեւմտահայերէնը ընդհանուր «Հայոց լեզու» նիւթի մէջ՝ Հայաստանի աշակերտները կը սորվին եւ կը գնահատեն իրենց արեւմտահայ եղբայրներուն և քոյրերուն լեզուն և մշակոյթը: Սա նաև կօգնէ որ հայերի միջեւ միասնութեան և ներառութեան աւելի մեծ զգացում ըլլայ, որը հիմա «հայերէն խօսա»-ների պատճառով չիկա:
Արևմտահայերէն քերականութիւնն ու ուղղագրութիւնը դպրոցական ծրագրին աւելացնելը մեր արմատները, լեզուն ու պատմութիւնը պահպանելու համար միայն մէկ քայլ է: Կարեւոր է նաև, որ անհատները եւ համայնքները շարունակեն օգտագործել լեզուն և խթանել լեզուն իրենց առօրյա կեանքի մէջ:
Բացի այդ ամէնը, Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն յայտարարուած է որպէս գրական հայերէն, բայց արդյո՞ք իսկապէս արեւմտահայերէնը ներառուած է: Եթե արևմտահայերէնը դուրս չթողելու նպատակով այդպէս գրվէր է, ինչու՞ բոլոր մնացած հարցերին մէջ արեւմտահայերէնը կանտեսուի: Ցանկացած պետական հաստատութեան հետ գործ ունենալու ժամանակ, նոյնիսկ հնարաւորութիւնը չ'կայ իրենց տուած փաստաթուղթը արեւմտահայերէնով պահանջելու: Թէև օրենքով պարտադրուած է, կանտեսուի: Այդ կ'ըսէ, որ բոլոր դեպքերու մէջ՝ բացի "արևելա"-ն պետական լեզուէն դուրս ձգելը, ՀՀ կառավարութիւնը կարեւորութիւն չի տար

արևմտահայերու դժուարութիւններուն Հայաստանի մէջ: Մենք մէկ ազգ ենք՝ հայ, և պետք չունինք աւելի շատ բաժանումի:
Ավելին, արևմտահայերէնով կը խօսին Հայ սփիւռքի մեծամասնութիւնը: Աշխոյժ հետաքրքրութիւն և ներդրում ցուցաբերելով արևմտահայերէնի պահպանման աշխատանքի մէջ՝ Հայաստանի Հանրապետութիւնը կամրապնդէ իր կապերը այս համայնքներու հետ և ցոյց կու տայ իր նուիրուածութիւնը աշխարհասփիւռ հայութեան մշակութային բազմազանութեան գործի մէջ:

Աղբյուրներ՝
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=90418&fbclid=IwAR2LqgXQ0CtEZaRYntedwXhonEvXXrOCiY-L8WEkIJwLTB4gRzm0uR9CBQk
https://www.1lurer.am/hy/2021/01/25/%D4%B1%D6%80%D6%87%D5%B4%D5%BF%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB-%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%BB%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%AC%D5%A5%D5%A6%D5%B8%D6%82%D5%B6-%D6%83%D6%80%D5%AF%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%A1%D6%80%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8%D5%9D-%D5%B0%D5%A1%D5%AC%D5%A5%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5-%D5%B4%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%81/400953?fbclid=IwAR0hy6NB9CQsQUY-mrbB-Yx1ezuPkgX1HOqbjGm1y1kSx8yAEIs66A_xsTg
https://www.aztagdaily.com/archives/335831?fbclid=IwAR1xOja_UUhK5FsqbU1Zj2ytEz15yz5-UNUAuW2XGFPTT1VYKk8Lhvtx3pY

Ցամաքող Սևանը

Հեղինակ՝

Լաուրա Թորոսյան

Ջրային ռեսուրսները մենք շարունակում ենք օգտագործել այնպես, որ նրանք անսպառ են: Տարիներ շարունակ ձևավորված կարծիք կա, որ Հայաստանն ունի անսպառ ջրային պաշարներ, և թե՛ մեր տնտեսվարողները, թե՛ շարքային քաղաքացին չունի ջրի խնայողության <<վարքագիծ>>: Հայաստանը միջին չափով ունի մեկ մարդուն չորս անգամ ավելի ջուր, քան նախատեսվում է: Սակայն ամեն տարի համաշխարհային բանկը միջազգային այլ ֆինանսական և զարգացմանը միտված կազմակերպություններն ունեն վերլուծություններ և հաշվարկներ, որտեղ Հայաստանն ունի ջրի սակավության խնդիր:

Սևանը Գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, ծովի մակարդակից 1900մ բարձրության վրա: ՀՀ ամենամեծ, իսկ Հայկական լեռնաշխարում երկրորդ լիճն է իր մեծությամբ:

ՀՀ համար Սևանը՝

-Քաղցրահամ ջրի պաշար է

-Ծովամթերքի բնական աղբյուր

-Զբոսաշրջության ոլորտի համար կարևոր կենտրոն և այլն...

Կարևոր է նաև նշել, որ Հարավային Ամերիկայում գտնվող Տիտիկակա լճից հետո Սևանը ծովի մակարդակից իր բարձրությամբ աշխարհում երկրորդ քաղցրահամ լիճն է:

Հիմնախնդիրներն ու դրանց առաջացման պատճառները

Այժմ Սևանը ճահճեցման եզրին է…

2018-ից ի վեր Սեւանա լճի ճահճեցումը դարձել է Հայաստանի բնապահպանական գլխավոր խնդիրներից մեկը:

Սևանի ճահճեցմանը նպաստում են՝

-Ջրիմուռների գերակայությունը ջրում և կենդանական աշխարհի վերացումը:

-Սևանա լճի ամբողջ երկայնքով ապօրինի շինությունները:

-Ջրի անխնա օգտագործումը:

-Խնդրի մասին բնակչության իրազեկման պակասը:

-Հետազոտությունների վերլուծություններով պայմանավորված արդեն պետության կողմից Սևանի բարեկարգմանն ուղղված անհապաղ քայլերի ձեռնարկման պակասը:

Լճին հարակից բնակավայրերը, հյուրանոցները, ժամանցի կենտրոնները, որոնցից շատերը կառուցվել են ՀՀ կառավարության կողմից 2008 թվականին ընդունված օրենքից հետո ոչ ճիշտ կառավարման արդյունք են:

Եթե այժմ չլինեին լճի ջրի մակարդակի բարձրեցման ուշացման հետ կապված խնդիրներ, Սևանին հարակից (ափին) կառուցված բնակավայրերը կանցնեին ջրի տակ: Կան կառույցներ, որոնք եղել են մինչև սույն օրենքի ընդունումը, որոնց մեծամասնությունը կազմում են գյուղական համայնքների բնակիչների տները: Մինչ օրս ոչ մի լուրջ նախաձեռնություն չի իրականացվել Սևանի ափամերձ հատվածներում ապրող բնակիչներին վերաբնակեցնելու ուղղությամբ, որոնք կառուցել են իրենց տները և օժանդակ շինությունները մինչև սույն օրենքի ընդունումը: Ինչը, ըստ իս, պետության՝ Սևանին հարակից գյուղական համայնքներին ինֆորմացիայի սխալ ներկայացման, անորոշ փոխհատուցումների խոստումների, ինչպես նաև բարեկարգումների իրագործման հետ կապված գործունեության երկարաժամկետ ձգձգումների հետևանք է:

Անցկացվել են լայնածավալ ապօրինի շենք-շինությունների ապամոնտաժումներ (հանրային լողափից դեպի թերակղզի) լճափնյա հատվածներում, ապամոնտաժվել են նաև ապօրինի շենք–շինությունները, տաղավարները, պարիսպները: Իրականացվել է նաև «Սևան» ազգային պարկի տարածքի վարձակալական պայմանագրերի գույքագրում, լուծարվել են մի շարք պայմանագրեր, ավելի քան 100 պայմանագիր վիճարկվել է դատական կարգով:

Սևանի կառուցապատման համար նախատեսված ափամերձ տարածքներն ունեն առողջապահական, տուրիզմի ռեկրեացիայի համար անհրաժեշտ պայմաններ և կարող են նպաստել վերջիններիս զարգացմանը:

Խնդիր է նաև հայաստանում շատ տարածված ձկնագողությունը, որի արդյունքում Սևանի ձուկն հայտնվում է շուկայում շուկայականից անհամեմատ խիստ ցածր գներով: Իշխանի անխնա օգտագործման հետևանքով ձկնատեսակն առայժմ <<Կարմիր գրքում>> է: Սխալ կառավարման հետևանքով հեռավոր ապագայում չէ նաև Սիգի՝ <<Կարմիր գրքում>> հայտնվելու հավանականությունը:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից անցկացվել են մի շարք նախագծեր կանոնակարգելու համար Սևանա լճում կենսապաշարի օգտագործման և կայուն կառավարման

ոլորտը: Ինչը գործիք է Սևանում ապօրինի ձկնորսության դեմ ավելի արդյունավետ կերպով պայքարելու ինչպես նաև լճի ձկնապաշարի վերականգնման ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկել:

Հարկ կլինի նաև նշել, որ ՀՀ ԱԱԾ կողմից իրականացվել են օպերատիվ-հետախուզական և քննչական գործողություններ ապօրինի ձկնորսության դեմ:

Չնայած ներդրված ջանքերին մինչ օրս այդ նախագծերը չեն տվել այն արդյունքը, որի շնորհիվ կկանխվեր Սևանա լճի ապօրինի ձկնորսությունը, ինչը և կնպաստեր լճի բարեկարգմանը:

Լճում ձկնապաշարի նվազման հետ ավելացան խեցգետնի պաշարները: Տարեկան խեցգետնի արդյունահանման ծավալներն էլ ավելացան և չնայած վերջինիս որսի սահմանափակումներին, սկսվեց և տարիներ շարունակ շարունակվեց անօրինական որսն ու արտահանումը: Այսպիսի անհետևողական կառավարումը հանգեցրեց խեցգետնի պաշարների նվազմանը:

Շրջակա միջավայրի նախարարությունից տեղեկացնում են՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի «Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների վերականգնման, պահպանման, վերարտադրման, ինչպես նաև դրանց պաշարների որոշման, ձկան և խեցգետնի արդյունագործական որսի քանակների, ձևերի և կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 1667-Ն որոշմամբ հաստատված՝ որոշման հավելվածով հաստատել է՝ Սևանա լճում բացի Սիգից(մինչև 400 գրամ) արդյունագործական որսը բոլոր այլ կենդանատեսակների համար արգելվում է:

Կարգում խոսվում է նաև ՝ Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեցգետնի որսն իրականացնել ցանկացողները լիազոր մարմին են ներկայացնում պայմանագիր կնքելու մասին հայտ:

Խիստ կարևոր է մշտապես ուշադրության կենտրոնում պահել Սևանի կենսաբազմազանության պահպանման, վերարտադրման խնդիրը:

Մինչ օրս խնդրին պատշաճ լուծում չի՛ տրվել, մինչ օրս մասնագետների կողմից գրվում են հոդվածներ ապօրինի ձկնորսության վերաբերյալ:

Օրինակ՝ Խեցգետնի ապօրինի ձկնորսության և պաշարների նվազման վերաբերյալ

Էվելինա Ղուկասյանը 2017 թ.

Էվելինա Ղուկասյան 2023 թ.

Շատ կարևոր խնդիր է նաև Հայաստանում ESS – ի ուսուցումն ու մասնագիտության տարածումը, քանի որ ունենք մասնագետների խիստ պակաս:

AUA համալսարանում այժմ անցկացվում է գիտության բակալավրիատի (BS) քառամյա բակալավրիատի ծրագիր շրջակա միջավայրի և կայունության գիտություններում(ESS):

Ծրագրի մասին՝

Ծրագրում նախատեսված է ուսանողներին տրամադրել գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են բնական և մարդու կողմից ստեղծված միջավայրերի առջև ծառացած կայունության մարտահրավերները հասկանալու և լուծելու համար: Ծրագիրը ուսանողներին հնարավորություն կտա վերլուծել մարդու ազդեցությունը մոլորակի կլիմայի, կենսաբազմազանության, կենսաերկրաքիմիական ցիկլերի, ջրային ռեսուրսների, ցամաքային համակարգերի և այլնի վրա: Բացի այդ, այն ուսանողներին հնարավորություն կտա կենտրոնանալ քաղաքային միջավայրի կայունության վրա, ներառյալ քաղաքային համահարթեցումը բնության հետ, շարժունակության և

էներգետիկ լուծումների, օդի որակի, ջրի օգտագործման և հեռացման, թափոնների և շրջանաձև տնտեսության, աղետներին դիմակայելու և այլնի վրա:

Ծրագրի մասին ավելին իմանալու համար կարող եք անցնել այս հղումով:

Ցամաքող Սևանը

Հեղինակ՝ Լաուրա Թորոսյան

Սևանա լճի հիմնախնդիրը յուրաքանչյուրինս է: Այդ խնդրի մասին խոսում են ջրի մակարդակի առաջին իջեցումից սկսած: Բոլոր լրատվամիջոցները, անհատ լրագրողները, բնապահպանները մշտապես բարձրաձայնում են Սևանա լճի հիմնախնդրի, լճի ռազմավարական նշանակության և ոչ ճիշտ կառավարման արդյունքների մասին: Մենք՝ որպես ՀՀ քաղաքացիներ, պարտավոր ենք խնդրին ծանոթանալ հիմնովին և այդ մասին բարձրաձայնել, մեր ձայնը լսելի դարձնել տարբեր հարթակներում, քանզի կայուն զարգացման սկզբունքներից է ապահովել ապագա սերունդներին ռեսուրսներով:

Աղբյուրներ՝

https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73451

https://armeniasputnik.am/20210215/sevan-hanrayin-loxap-aporini-tnak-taxavar-lusankar-26456135.html

https://factor.am/515439.html

https://www.pastinfo.am/hy/news/2020/08/10/%D4%B1%D5%BA%D6%85%D6%80%D5%AB%D5%B6%D5%AB-%D5%B1%D5%AF%D5%B6%D5%B8%D6%80%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A5%D5%B4-%D5%BA%D5%A1%D5%B5%D6%84%D5%A1%D6%80%D5%9D-%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D6%84%D5%AB-%D5%B8%D6%82%D5%AA%D5%B8%D5%BE/1040054

http://www.env.am/news/4951

https://orbeli.am/hy/post/403/2020-03-28/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8+%D5%AD%D5%A5%D6%81%D5%A3%D5%A5%D5%BF%D5%B6%D5%AB+%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B7%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D6%81+%D5%A6%D6%80%D5%AF%D5%BE%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82+%D5%B7%D5%A5%D5%B4%D5%AB%D5%B6%E2%80%A4+%D5%AB%D5%B6%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BD+%D6%87+%D5%AB%D5%B6%D5%B9%D5%B8%D6%82

https://www.1lurer.am/hy/2022/04/04/%D5%80%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A5%D5%B6-2022-%D5%A9%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%8D%D6%87%D5%A1%D5%B6%D5%A1-%D5%AC%D5%B3%D5%B8%D6%82%D5%B4-%D5%BD%D5%AB%D5%A3%D5%AB-%D5%A1%D6%80%D5%A4%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B8%D6%80%D5%BD%D5%AB-%D5%B9%D5%A1%D6%83%D5%A1%D6%84%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8/695923

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168581

https://www.aravot.am/2017/08/03/900777/

https://www.panorama.am/am/news/2023/01/21/%D5%AD%D5%A5%D6%81%D5%A3%D5%A5%D5%BF%D5%AB%D5%B6-%D4%B7%D5%BE%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A1-%D5%82%D5%B8%D6%82%D5%AF%D5%A1%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6/2784397

https://cse.aua.am/ess/